Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

21766
24201

361(061)
Л-21

Ш. Р

361 (Ա61)
Դ-291
2002
2010

## ԴԱՇՏՈՆԱԿԱՆ

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

*հաստատված է 1924 թ. նոյեմբ. 3-ին*

1. *Հայաստանի Կենտգործկոմին կից «Անապաստան յերեխաների վիճակը բարելավող հանձնաժողովի» նախաձեռնության տակ հիմնըվում է Հայաստանի յերեխաների բարեկամների» ընկերություն:*

### Ա. Ընկերության նպատակը·

2. *Ընկերության նպատակն է՝*

*ա) Բարելավել անապաստան ու որբա-*



7393-57

տավոր յերեխաների դրությունը՝ բանալով համապատասխան հիմնարկություններ և ոժանդակելով Լուսժողկոմատի ու Հողժողկոմատի նման ձեռնարկություններին։

բ) Աջակցել անխնամ պատանեկությանը աշխատանք գտնելու գործում—կազմակերպելով գյուղատնտեսական կոմունաներ, արհեստանոցներ և այլն։

գ) Ընկերության լայն խավերին նըպատակները իրազեկ դարձնելու համար՝ կազմակերպել ու կիրառել գրավոր ու բանավոր պրոպագանդա, համաձայնեցնելով այդ աշխատանքը նույն ուղղությամբ գործող կազմակերպությունների հետ։

### Բ. Ընկերության միջոցները.

3. Ընկերության միջոցները կազմում են՝

ա) անդամավճարները,

բ) Կամավոր նվերներ,

գ) Մանկական գրքերի, պլակատների դրոշմանիշների, ժետոնների և այլ նյութերի վաճառումից գոյացած գումարները։

դ) Կիրակնորյակներից, զեկուցումներից, վիճակախաղերից, յերեկույթներից, համերգներից, դասախոսություններից, ներկայացումներից, զբոսանքներից, կինոներից, և այլ նման ձեռնարկություններից ստացված գումարները։



### Գ. Ընկերության անդամների պարտականությունները

4. Ընկերության անդամ կարող է լինել ընտրական իրավունք վայելող յուրաքանչյուր քաղաքացի, վոր վճարում է սահմանված անդամավճարը և աջակցում ընկերության գործունեությանը։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Կարող են անդամագրվել նաև կոլեկտիվներ, դրա համար անհրաժեշտ է ներկայացնել տեղկոմի կամ հիմնարկության կողմից վավերացված արձանագրություն։

5. Անդամավճարների չափն է 1) Կարմիր զինվորների, գործազուրկների և ուսանողների համար՝ 5 կոպ. ամսական, 2) բանվորների և ծառայողների համար 20. կոպ., 3) պատասխանատու պաշտոնյաների համար 50 կոպ., ազատ զբաղմունք ունեցողների համար 1 ռուբլի։

Նախավճար մուծում են՝ 1) ուսանողները 10 կոպ., 2) ծառայողներն ու բանվորները 25 կոպ., 3) պատասխանատու պաշտոնյաները 1 ռուբ., 4) ազատ զբաղմունք ունեցողները 1 ռուբ. և ավելի ըստ իրենց յեկամտի։

### Դ. Ընկերության օրգանները.

7. Ընկերության օրգաններն են՝
ա) Ընդհանուր ժողովը,
բ) Կենտ.-Վարչությունը,
գ) Վերստուգիչ Հանձնաժողովը։

### ՅԵ. Ընդհանուր ժողով.

8. Ընկերության ճյուղերի համագումարը կոչվում է ընդհանուր ժողով, որ ընկերության գերագույն օրգանն է և հրավիրվում է առնվազն տարին մի անգամ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Ընդհանուր ժողովին տալիս են մինչև 200 անդամ ունեցող ճյուղերը 1 ներկայացուցիչ՝ մինչև 500 — 2 ներկայացուցիչ, մինչև 100-ը — 3 և 1000-ից ավելին — 4 ներկայացուցիչ։



9. Ընդհանուր ժողովն է՝ 1) ընտրում է ընկերության օրգանները, 2) լսում ու հաստատում է հաշվետվությունը։

### Զ. Ընկերության Վարչություն.

10. Ընկերության Կենտրոնական Վարչությունը բաղկացած է 15 անդամներից, 5 անձնափոխանորդներից և ունի իր նախագահությունը 5 անդամից և 3 անձնափոխանորդներից։

11. Վարչության մեջ կարող է ընտրվել ընկերության յուրաքանչյուր անդամ։

12. Վարչությունն ունենում է իր ժողովներն առնվազն ամիսը մեկ անգամ։

13. Վարչությունն իր միջից ընտրում է նախագահ, փոխնախագահ, գանձապահ, քարտուղար։

14. Վարչությունը հրահանգում և ղեկավարում է ընկերության աշխատանքները հանրապետության սահմաններում։

### Է Վերստուգիչ Հանձնաժողով

15. Վերստուգիչ հանձնաժողովը՝ ընտրված

Նախավճար մտցնում են՝ 1) ուսանողները 10 կոպ., 2) ծառայողներն ու բանվորները 25 կոպ., 3) պատասխանատու պաշտոնյաները 1 ռուբ., 4) ազատ զբաղմունք ունեցողները 1 ռուբ. և ավելի ըստ իրենց յեկամտի:

## Դ. Ընկերության օրգանները.

7. Ընկերության օրգաններն են՝
ա) Ընդհանուր ժողովը,
բ) Կենտ.-Վարչությունը,
գ) Վերստուգիչ Հանձնաժողովը:

## ՅԵ. Ընդհանուր ժողով.

8. Ընկերության ճյուղերի համագումարը կոչվում է ընդհանուր ժողով, որ ընկերության գերագույն օրգանն է և հրավիրվում է առնվազն տարին մի անգամ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Ընդհանուր ժողովին տալիս են մինչև 200 անդամ ունեցող ճյուղերը 1 ներկայացուցիչ՝ մինչև 500—2 ներկայացուցիչ, մինչև 100-ը—3 և 1000-ից ավելին—4 ներկայացուցիչ:



9. Ընդհանուր ժողովն է՝ 1) ընտրում է ընկերության օրգանները, 2) լսում ու հաստատում է հաշվետվությունը:

## Զ. Ընկերության Վարչությունը.

10. Ընկերության Կենտրոնական Վարչությունը բաղկացած է 15 անդամներից, 5 անձնափոխանորդներից և ունի իր նախագահությունը 5 անդամից և 3 անձնափոխանորդներից:

11. Վարչության մեջ կարող է ընտրվել ընկերության յուրաքանչյուր անդամ:

12. Վարչությունն ունենում է իր ժողովներն առնվազն ամիսը մեկ անգամ:

13. Վարչությունն իր միջից ընտրում է նախագահ, փոխնախագահ, գանձապահ, քարտուղար:

14. Վարչությունը հրահանգում է ղեկավարում է ընկերության աշխատանքները հանրապետության սահմաններում:

## Է. Վերստուգիչ Հանձնաժողով

15. Վերստուգիչ հանձնաժողովը՝ ընտրված

ընդհ. հիմունքներով, ունի 3 անդամ և 2 փոխ անդամ։ Նա է ստուգում ընկերության գործավարությունն ու ֆինանսական գործառնությունը։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ —. Վերստուգիչ հանձնաժողովն ընկերության ֆինանսական գործառնությունն ստուգում է վոչ պակաս քան ամիսը մեկ անգամ։

## Թ. Ընկերության ճյուղերը

16. Հայաստանի սոցիալիստական խորհրդային հանրապետության բոլոր գավառամասերում, քաղաքներում և խոշոր գյուղերում նույն հիմունքներով ընկերության ճյուղեր են կազմակերպում, վորոնք հաստատում են ընկերության Կենտ. Վարչության կողմից։

17. Ճյուղերն ունեն իրենց տեղական վարչությունները և տեղական վերստուգիչ հանձնաժողովները, վորոնց անդամների և փոխանդամների թիվը տեղական ընդհանուր ժողովներումն են վորոշում։

18. Տեղական կարիքների համար ճյուղերն



իրենց յեկամուտից ծախսում են կենտրոնական Վարչության համաձայնությամբ և թույլտվությամբ։

19. Բոլոր անդամներին կարելույն չափ նպատակահարմար ոգտագործելու համար ընկերությունը գործարաններում, հիմնարկություններում և այլ տեղերում կազմակերպում է բջիջներ և լիազորություններ վորոնք իրագործում են տեղական ճյուղերի վորոշումներն ու կարգադրությունները։

## Ժ. Ընկերության լիկվիդացիան.

20. Ընկերության լիկվիդացիան կարող է տեղի ունենալ միայն ընդհանուր ժողովի վորոշումով ու Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի հաստատությամբ։

## Ի. Ըրկերության կնիքը.

21. Ընկերությունը իրավաբանական մարմին է և ունի կնիք «Հայաստանի յերեխանե-

րի Բարեկամների Ընկերության մակա-
գրությամբ։

Կենտրոնական Գործադիր Կոմի-
տեյի նախագահի տեղակալ՝
Հ. ԱԶԱՏՅԱՆ

Ժողովրդական Կոմիսարների
Խորհրդի նախագահ՝ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ
(ԼՈՒԿԱՇԻՆ)

Կենտրոնական Գործադիր կոմի-
տեյի Քարտուղար՝ Հ. ՏԱՏՅԱՆ

361(061)
Դ-22

Գոար. № 2046 Տիր. 500. Պատվ. 2915.

Տպագր. Տրեստի 2-րդ տպարան, Յերեվան.

10

Ս. ՇԱՀՈՒՄՅԱՆԻ
Կենտրոնական Գրադարան
...чная Библиот...

2013

21766

ՀՀ Ազգային գրադարան
NL0050320